

ԱՅՍ ԱՆԳԱՄ ԱՃԵԼ Է ՍԱՅՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՅԵՏԱԶԵՐՔՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

2-ը հուլիսի, 2005թ. [համառոտ հաշվետվություն, 3-րդ հետազոտություն]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ՀՆԱՐԱՎՈՐ ՍԱՅՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2005թ. ծրագրվող սահմանադրական բարեփոխումների եւ սահմանադրական հանրաքվեի շուրջ քննարկումները նոր ընթացք են ստացել:

ՀՀ Սահմանադրության փոփոխությունների փորձ արվել էր 2003թ.: Մինչդեռ սահմանադրական փոփոխությունների նախագիծը քվեարկությամբ չստացավ Հայաստանի քաղաքացիների անհրաժեշտ աջակցությունը:

Որքանով են մեր քաղաքացիներն իրազեկված սահմանադրական փոփոխությունների ներկայիս նախաձեռնությունը, արդիակա՞ն է արդյոք այս նախաձեռնությունը հասարակության համար, ընտրելու իրավունք ունեցող մեր քաղաքացիների ո՞ր հատվածն է պատրաստակամ մասնակցել հանրաքվեի քվեարկությանը:

Այս հարցերին պատասխանելու համար «Ընտրական համակարգեր կենտրոնի» Vox Populi հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնը շարունակում է իրականացրել մոնիտորինգային հետազոտություն Երեւան քաղաքի բնակիչների շրջանում:

Առաջին հետազոտությունն անցկացվել էր 2004թ. հոկտեմբերի 6-9-ը, երկրորդը՝ 2005թ. ապրիլի 1-3-ը, վերջինը՝ հունիսի 30-ից հուլիսի 2-ը:

ԵԹԵ ՍԱՅՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆԱՐԱՔՎԵՆ ԱՆՑԿԱՑԿԻ ԱՌԱՋԻԿԱ ԿԻՐԱԿԻ ՕՐԸ, ԿՄԱՍՆԱԿՑԵՔ ԱՐԴՅՈՔ ՀՆԱՐԱՔՎԵԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ

	2004թ. 6-9-ը հոկտեմբերի	2005թ. 1-3-ը ապրիլի	2005թ. 2-ը հուլիսի
Այո, կմասնակցեմ	9%	10%	13%
ավելի շուտ կմասնակցեմ	13%	9%	16%
ավելի շուտ չեմ մասնակցի	15%	24%	18%
ոչ, չեմ մասնակցի	31%	36%	32%
դժվարանում եմ պատասխանել	32%	21%	21%

ԳԻՏԵՐԸ ԱՐԴՅՈՔ ԹԵ ԻՆՉ ՍԱՅՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ
ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԲԱՂԱԲԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ

	2004թ. 6-9-ը հոկտեմբերի	2005թ. 1-3-ը ապրիլի	2005թ. 2-ը հուլիսի
Այո	8%	11%	19%
ոչ	56%	67%	60%
դժվարանում եմ պատասխանել (պատասխան չկա)	36%	22%	21%

Չարցումն անցկացվել է 2005թ. հունիսի 30-ից հուլիսի 2-ը, Երեւան քաղաքի 624 (18 եւ ավելի տարիքի) բնակիչների շրջանում: Չարցումը հեռախոսային էր: Ընտրանքը՝ պատահական, չկրկնվող:

«Ընտրական համակարգեր կենտրոնի»

Vox Populi հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն

www.expert.am

www.persons.am

mail: info@expert.am, expert@expert.am , info@persons.am